Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1- Պետության և իրավունքի առաջացումը, Թեմա 2- Պետության էությունը և գործառույթները, Թեմա 3- Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում, Թեմա 4- Սոցիալական նորմերի հասկացությունն ու տեսակները, Թեմա 5- Իրավունք և իրավագիտակցություն, Թեմա 6- Օրինականություն և իրավակարգ, Թեմա 7- Իրավունքի համակարգը, Թեմա 8- Իրավական պետություն, Թեմա 9- Սահմանադրական իրավունք, Թեմա 10- Սահմանադրական կարգ հասկացությունը
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատման մեթոդներին և չափորոշիչներն ուղղորդված են կրթության վերջնարդյունքներին Առարկան ամփոփվում է քննությամբ՝ 4-րդ կիսամյակում) Գնահատման չափանիշները (ընթացիկ ստուգումների) տարբերակների երեք հարցերից յուրաքանչյուրին տրված պատասխանի բովանդակությունը պատասխանի մեջ նյութի ինքնուրույն յուրացման մասնաբաժինը շարադրանքի տրամաբանվածությունը, ծրագրային նյութի յուրացվածության աստիճանը ծրագրային նյութից դուրս իմացությունը Գործնական աշխատանքների ընթացքում իմացության ստուգում Ինքնուրույն աշխատանքների գնահատում անհատական աշխատանքների հանձնարարում իրավաբանական խնդիրների լուծում Հաճախելիություն նահատման մեթոդը դասերին հաճախման հաշվառում Գնահատման չափանիշը ներկայություն մասնակցություն հարցերի քննարկմանը Համակարգչային թեստային ստուգում Գնահատման չափանիշները համակարգչային թեստային ստուգում նախատեսված չէ Ուսուցման վերջնական արդյունքների գնահատում արդյունքների հանրագումար գնահատման հարյուր միավորանոց սանդղակով:
Գրականություն	Պարտադիր՝ 1. ՀՀ Սահմանադրություն 2. Վ.Ն Խռոպանյուկ «Պետության և իրավունքի տեսություն», 2001թ. 3. Վ.Ս. Ներսեսյանց «Իրավունքի և պետության տեսություն», 2001թ. 4. Ապիյան Ն. «Պետության և իրավունքի հիմնահարցեր», 2003թ.

	5. Васильев А. В. «Теория государства и права, 1998 6. Алексеев С Г« Теория государства и права. 2004 Լրացուցիչ՝ 1. www. yandex.ru. 2. www.google.ru 3. www.lib.ru 4. www.books.ru

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/բ-065-Քաղաքագիտություն**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	Քաղաքագիտություն առարկայի դասավանդումը նպատակ ունի ուսանողին գիտելիքներ տալ քաղաքական պատմության, գործընթացների և զարգացման փուլերի մասին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում ուսանողը պետք է գաղափար ունենա քաղաքական համակարգի, պետության կառավարման տիպերի և ձևերի, քաղաքական իշխանության, քաղաքական կուլտուրայի, քաղաքական կազմակերպությունների, իշխանության ձևավորման սկզբունքների, միջազգային քաղաքական կազմակերպությունների մասին: Առարկայի ուսումնասիրումը հնարավորություն կտա պատկերացում կազմել հայ ժողովրդի մշակութային նվաճումների մասին, գնահատել գեղեցիկն ու մշակութային արժեքները: Քաղաքագիտություն առարկայի ուսումնասիրմամբ ուսանողը միաժամանակ կշփվի համաշխարհային քաղաքական պատմության, մշակութաբանության, փիլիսոփայության և այլ գիտությունների հետ: Քաղաքագիտություն առարկան նախատեսված է ներկայացնել ոչ մասնագիտական բաժիններին, որպեսզի ապագա մանկավարժը գիտելիներ ունենա քաղաքական համակարգի և պետական կառավարման մասին			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* 1.ինքնուրույն վերլուծել քաղաքական իրադարձությունները 2.տարբերել քաղաքաքան և քաղաքագիտական սուբյեկտների գործառույթները 3.տարբարակել պետական կառավարման համակարգի տիպեը			

	4.տարբերակել պետության տիպերն ու ձևերը 5. հասկանալ քաղաքական կոնֆլիկտների տիպերն ու կառուցվածքը, լուծման ուղիները *Հմտություն* 1.գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն 2.հետազոտություններ կատարելու ունակություններ 3.սովորելու ունակություն 4.առաջնորդի հատկություններ 5.որակի կարևորության գիտակցում *Կարողունակություն* վերլուծման և համադրման ունակություն կազմակերպման և պլանավորման ունակություն 3.հենքային և ընդհանուր գիտելիքներ 4.տեղեկատվությունը կառավարելու ունակություն, տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն 5.քննադատական վերլուծություն և ինքնաքննադատման ունակություն 6.միջառարկայական թիմում աշխատելու ունակություն
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Քաղաքագիտության առարկան, խնդիրները, մեթոդները, կապը հասարակական այլ գիտությունների հետ Թեմա 2. Քաղաքագիտության սուբյեկտները: Հասարակական քաղաքական համակարգ Թեմա 3. Պետություն, տիպերը, ձևերը Թեմա 4. Քաղաքական իշխանություն Թեմա 5. Քաղաքական գործընթացներ և կոնֆլիկտներ: Քաղաքական կուլտուրայի տիպերը Թեմա 6. Մարդու դերը քաղաքականության մեջ Թեմա 7. Անցումային հասարակության քաղաքական համակարգը: Իրավական պետություն
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով՝ 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ. □ ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, □ ինքնուրույն աշխատանքի կատարում, □ սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցություն, □ թեստային առաջադրանք պատասխանի ընտրությամբ կամ կարճ ազատ պատասխանով
Գրականություն	Պարտադիր 1 Վ. Թումանյան «Քաղաքագիտություն», 1992թ. 2.Քաղաքագիտության ներածություն, 1994թ. 3.Քաղաքագիտություն ներածություն, Երևան, 1996թ. 4.Ռ. Պետրոսյան, Քաղաքագիտություն, Երևան 2002թ. 5.ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2015թ. Լրացուցիչ 1Հ. Մանուչարյան «Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության» Երևան, 2002թ. 2.Գ. Միրումյան «Քաղաքական ուսմունքների պատմություն» 2006թ

	3.Зеркин, Основы политологии, 1999г. 4.Բ. Խաչատրյան, Քաղաքագիտություն, 2017թ.

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/բ-064- Մշակութաբանություն**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	4-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	- Մշակութաբանություն դասընթացի ծրագրային բովանդակության տիրապետումը, մշակույթի, մարդու, հասարակության ու աշխարհի մասին ընդհանուր գիտելիքների յուրացում: - աշխարհայացքային կողմնորոշումների հստակեցում - մասնագիտական, ընդհանուր գիտական և մշակութաբանական խնդիրների փոխառնչությունների պարզաբանման սկզբունքային մոտեցումների իմացում - մասնագիտական գիտելիքների զարգացմանը նպաստող մշակութա-մեթոդաբանական մտածելակերպի տարրերի ձևավորում - համաշխարհային և ազգային մշակույթի նվաճումներին հաղորդակից լինելը և մշակութաբանության բարդ հիմնախնդիրների համակարգում ճիշտ կողմնորոշվելը			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Մշակութաբանության որպես ինքնուրույն գիտության ձևավորումը, հետազոտման մեթոդները: Մշակույթ հասկացության մեկնաբանումը և սահմանումները: Մշակույթի գործառույթները: Մշակույթի դասակարգման հիմնական չափորոշիչները, մշակույթի առանձին տիպերի բնութագիրը, կրոն և մշակույթ, բարոյականություն, արվեստ, գիտություն: Բնությունն իբրև փիլիսոփայական և մշակութաբանական կատեգորիա: Արժեք հասկացության բնորոշումը, մշակույթի և արժեքների կապը, արժեքների դասակարգումը: Քաղաքակրթություն հասկացության բնութագիրը, քաղաքակրթության և մշակույթի ընդհանրություններն ու տարբերությունները; *Հմտություն* - մշակութային երևույթների օրինաչափությունները, կառուցվածքը, տիպաբանությունը, պատճառա-հետևանքային կապերը հասկանալու ունակություն - մշակույթի վերաբերյալ եղած սկզբնաղբյուրների հետ աշխատելու ունակություն			

	ունեցած ինֆորմացիայի և տեղեկատվության տարբեր ձևերը օգտագործելու հմտություններ մշակույթի վերաբերյալ ունեցած գիտելիքների համակարգում և վերլուծություն մասնագիտական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման ունակություն, միջանձնային գործնական հմտություններ *Կարողունակություն* Ինքնուրույն աշխատելու ունակություն Հետազոտություններ կատարելու ունակություն Անկախ սովորելու ունակություն Հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները Համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվություն, Հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները Ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Մշակութաբանության ուսումնասիրության առարկան, մեթոդները, գործառույթները Թեմա 2. Զանգվածային և էլիտար մշակույթ Թեմա 3. Հոգևոր գործունեության մշակութային ձևերը Թեմա 4. Մարդ, բնություն, մշակույթ Թեմա 5. Մշակույթ և արժեքներ, մշակույթ և քաղաքակրթություն Թեմա 6. Մշակութային երկխոսություն և գլոբալիզացիա
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գիտելիքների ստուգումը և գնահատումը իրականացվում են հետևյալ բաղադրիչներով՝ ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով, բ) գործնական (սեմինար) աշխատանքներին ուսանողի մասնակցության, նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում, գ) ինքնուրույն կատարվող աշխատանքների (անհատական առաջադրանքների) հաշվառում գնահատում, դ) կրթական մոդուլի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում ու գնահատում կիսամյակի ընթացքում, ե) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, անհատական առաջադրանքների, գործնական աշխատանքներին ուսանողի ակտիվության, հմտությունների և կարողությունների գնահատման, ընթացիկ և հանրագումարային գնահատումների հիման վրա դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում
Գրականություն	*Պարտադիր-* 1. Մելքումյան Գ.Ա. Մշակութաբանություն, 2001 2. Գուրևիչ Ս., Մշակութաբանություն,1996

	3. Բորև Յու.Բ., Գեղագիտություն, 1989 4. Սարգսյան Ս.Ա., Մշակութաբանություն, 1996 *Լրացուցիչ-* 1. Հովհաննիսյան Ս., Կուլտուրան և բնությունը, Երևան, 1984 2. Макарян Э.С. , Теориякультурыисовременнаянаука, Ереван 1984 3. Малюра Ю.А. Культурология, Москва, 1999 4. Лосев А.Д. Философия. Мифология. Культура, Москва, 1991 5. Культурология. История мировой культуры, Москва, 1995 6. Розин В.М. Введение в культурологию, Москва, 1994 7. Швейцер А. Культура и этика, Москва, 1994 8. Шнен О. Закат Европы, Москва, 1991 9. Философский словарь, Москва, 1983 10. Փիլիսոփայական բառարան

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/բ-060-Հայաստանի պատմական եվ ճարտարապետական հուշարձաններ**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	4-րդ տարի տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է համակարգված ձևով ուսանողներին ներկայացնել հայ ժողովրդի հանճարով ստեղծված պատմա-մշակութային, ճարտարապետական հուշարձանները, լուսաբանել նյութական մշակույթի այդ բնագավառի կազմավորումն ու զարգացումը, օրինաչափություններն ու առանձնահատկությունները, ինչպես նաև բնապատմական ու պատմա-մշակութային այն պայմանները, որոնք նպաստել կամ խոչընդոտել են այս ոլորտի զարգացմանը:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* - Տիրապետում է Հայաստանի պատմական հուշարձանների պատմությանը, դրանց ուսումնասիրման խնդիրներին, նպատակներին, տեսակներին և պատկերացում ունենա դրանցից յուրաքանչյուրի մասին: *Հմտություն* - Կարողանում է կատարել պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություն, - Կարողանում է համադրել պատմական փաստերը և համակողմանի գնահատել երևույթները,			

	□ Ունի սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ, □ Կարողանում է կոնկրետ տեսական գիտելիքները կիրառել պատմական իրողությունները հասկանալու համար, □ Կարողանում է պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից: □ Ունի պատմագիտական հետազոտություններ կատարելու ունակություններ: *Կարողունակություն* □ Կարողանում է կատարել Հայաստանի պատմական հուշարձանների վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և վերլուծություն,
Դասընթացի բովանդակությունը	Ներածություն. «Հայաստանի պատմական և ճարտարապետական հուշարձաններ» առարկայի բովանդակությունը Թեմա 1.Հայաստանի պատմա-ճարտարապետական հուշարձանները 4-5-րդ դդ. Թեմա 2.Հայաստանի պատմա-ճարտարապետական հուշարձանները 6-7-րդ դդ. Թեմա 3.Հայաստանի պատմա-ճարտարապետական հուշարձանները 8-10-րդ դդ. Թեմա 4. Հայկական Վերածննդի պատմա-ճարտարապետական հուշարձանները 10-14-րդ դդ. Թեմա 5.Հայաստանի պատմա-ճարտարապետական հուշարձանները 15-17-րդ դդ. Թեմա 6.Սյունիքի, Վասպուրականի և Անի-Շիրակի Ճարտարապետական դպրոցները: Միջնադարյան Հայաստանի խաչքարային արվեստը Թեմա 7. Արցախի պատմա-ճարտարապետական հուշարձանները Թեմա 8. Հայաստանի պատմա-ճարտարապետական հուշարձանները 17-20-րդ դդ.
Գնահատման մեթոդները և չափանիշները	□ զեկուցումներ □ քննարկումների կազմակերպում □ կիրառական առաջադրանքների կատարում □ փոքրածավալ ինքնուրույն աշխատանքներ
Գրականություն	Պարտադիր 1. Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992 2. Ղաֆադարյան Կ., Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Եր., 1975 3. Իսաբեկյան Հ., Հայկական Ռենեսանսի ճարտարապետությունը (10-14-րդ դդ.), Եր., 1990 4. Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. 9-13-րդ դդ. Խաչքարերը. Բ. Առաքելյանի խմբագրությամբ, Եր., 1984 5. Մկրտչյան Ծ., Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Եր., 1988 Լրացուցիչ 1. Գրիգորյան Վ., Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները,1982

	2. Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Եր., 2004 3. Հայկական եկեղեցիներ, Սբ. Էջմիածին, 1970 4. Չալոյան Վ., Հայկական Ռենեսանս, Եր., 1964 5. Բարխուդարյան Ս., Միջնադարյան հայ ճարտարապետները և քարագործ վարպետները, Եր., 1963 6. Զարյան Ա.,Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքինության պատմության,1986 7. Հարությունյան Վ., Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները,1960 8. Խալփախչյան Հ., Հայաստանի արտադրական կառուցումները, 1961 9. Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, 1982 10. Հովհաննիսյան Կ., Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը Սովետական Հայաստանում, 1978

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/բ- 036-Հայ առաքելական եկեղեցու պատմություն**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	4-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	1. Ուսանողներին ծանոթացնել հայ առաքելական եկեղեցու ծագմանը և կազմավորմանը, քրիստոնեական ուսմունքի բարոյագիտական սկզբունքներին, հայոց եկեղեցու տեղին ու դերին ազգապահպանությանու հայապահպանության, ազգային-ազատագրական պայքարի ոգեշնչման և հայկական մշակույթի պահպանման գործում: 2. Ուսանողներին հիմնարար գիտելիքներ հաղորդել հայ կաթողիկոսների գործունեության, երկրի հասարակական-քաղաքական կյանքում նրանց ունեցած ներդրման, ինչպես նաև առաքելական եկեղեցու՝ որպես հոգևոր կառույցի, համաշխարհային քրիստոնեության համատեքստում ունեցած առնձնահատուկ տեղի և դերի մասին:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Հայ եկեղեցու կազմավորման և զարգացման հիմնական փուլերի, Հայոց կաթողիկոսների, կաթողիկոսական աթոռների և աշխարհասփյուռ թեմերի գործունեության, միջնադարյան հայ մշակույթի զարգացման և պահպանման գործում, հայ			

	ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում, Հայաստանի ազատագրության հարցում հայ եկեղեցու և նրա նշանավոր գործիչների խաղացած դերի իացություն: *Հմտություն* Հայ եկեղեցու պատմությանը վերաբերող սկզբնաղբյուրներին և գիտական գրականության մեջ առկա հիմնական տեսակետների միջև կողմնորոշվելու և քննադատական մոտեցում ցուցաբերելու ունակության: *Կարողունակություն* *1.* համադրել հայոց պատմության և հայ եկեղեցու պատմության առանքային խնդիրները *2.* վերլուծել հայ եկեղեցու նշանավոր գործիչների վարքն ու գործունեությունը տվյալ պատմական ժամանակաշրջանում *3.* համեմատել հայ եկեղեցու զարգացման փուլերն ու դրանց օրինաչափությունները 4. գնահատել հայ եկեղեցու խաղացած դերը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում, մշակույթի և հայապահպանության բնագավառում 5. գնահատել Հայոց Մեծ Եղեռնի, ստալինյան բռնաճնշումների և քաղաքական այլ հալածանքների հետևանքով Հայ եկեղեցու կրած վնասները, կորուստները
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Հայ եկեղեցու պատմության պարբերացումը: Քրիստոնեության ընդունման նախադրյալները Հայաստանում: Հայոց եկեղեցին 1-3-րդ դարերում Թեմա 2. Քրիստոնեության ընդունումը Հայաստանում որպես պետական կրոն: Հայոց եկեղեցին 4-5-րդ դարում: Թեմա 3. Հայոց եկեղեցին 7-9-րդ դարերում Թեմա 4. Հայոց եկեղեցին Բագրատունյանց թագավորության շրջանում Թեմա 5. Հայոց եկեղեցին Կիլիկիայի հայկական իշխանության և թագավորության ժամանակաշրջանում Թեմա 6. Կաթողիկոսության վերահաստատումը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնում: Հայոց եկեղեցին 15-16-րդ դարերում Թեմա 7. Հայոց եկեղեցին 17-18-րդ դարերում Թեմա 8. Հայոց եկեղեցին ռուսական տիրապետության հաստատումից հետո Թեմա 9. Հայոց եկեղեցին առաջին աշխարհամարտի նախօրյակին և տարիներին: Թեմա 10. Հայոց եկեղեցին Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին Թեմա 11. Թեմա 12. Հայոց եկեղեցին խորհրդային իշխանության տարիներին Թեմա 13. Հայոց եկեղեցին արդի փուլում Թեմա 14. Հայոց եկեղեցին և Սփյուռքը
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով՝ 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ. □ ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, □ ինքնուրույն աշխատանքի կատարում, □ սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցություն, □ ուսանողի կողմից դրսևորած ընթացիկ ակտիվություն,

	հմտություններ և կարողություններ, □ թեստային առաջադրանք պատասխանի ընտրությամբ կամ կարճ ազատ պատասխանով
Գրականություն	*Պարտադիր* 1. Մաղաքիա Օրմանյան, Ազգապատում, հատոր Ա-Գ, Բեյրութ, 1959, 1960, 1961 2. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Հայոց եկեղեցին, Երևան, 1993 3. Յուսիկ վարդապետ Մովսիսեան, Հայաստանեայցս առաքելական Ս. եկեղեցւոյ պատմութիւն, Էջմիածին, 2008 4. Վարդանյան Վրեժ Մկրտչի, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005 5. Պետրոսյան Եզնիկ քահանա , Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա, Էջ միածին, 1990 6. Տեր-Մինասյան Ե. Հայոց եկեղեցին, ուսումնաօժանդակ ձեռնարկ, Էջմիածին, 2014 7. Հայ եկեղեցու սուրբ կաթողիկոսները, Էջմիածին, 2017 8. Ամենայն Հայոց Կաթողիկոսներ, հանրագիտարան, Ս. Է ջմիածին, 2008 *Լրացուցիչ* 1. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002 2. Ավագ Հարությունյան, Մայր Աթոռ Ս.Էջմիանի հասարակական և դիվանագիտական գործունեությունը 1918-1920թթ., Երևան, 2004 3. Բալայան Մ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին VI-XVդդ., Եր., 2003 4. Դանիելյան Է. Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ առաքելական եկեղեցին 6-7-րդ դարերում, Եչրամ, 2000 5. Դավթյան Հ., Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը: Հայաստանյաց առաքելական եկեղեցին և մեր պատմության ընթացքը, Եր., 2007: 6. Իսկանյան Վ., Հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները 4-7-րդ դարերում, Եր., 1991 7. Լեո, Հայ կղերական դիվանագիտությունը, «Անահիտ» հայրենակցական բարեգործական ընկերության հրատարակ. 8. Հակիրճ պատմություն և բացատրություն Հայաստանեա յց առաքելական սուրբ եկեղեցու, Էջմիածին, 2012

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՄՀ/բ 058-Սոցիոլոգիա**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	4-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10

			Սեմինար	14
			Լաբորատորաշխատանք	
			Գործնականաշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ գիտելիքներ ձևավորել սոցիոլոգիայի պատմական անհրաժեշտության, հասարակության ուսումնասիրության համար ունեցած դերի, սոցիոլոգիական աշխարհայացքի բազմազանության և բազմաձևության մասին:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթականծրագրիհետևյալվերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Հասարակությունն իբրև համակարգ, դրա հիմնական տարրերը, դրանց միջև փոխկախվածության գործընթացները և վերահսկողության մեխանիզմները: *Հմտություն* Սոցիոլոգիական տեսությունների հիմնական ձևերին, մեթոդներին, գործիքներին, վերլուծության եղանակներին: *Կարողունակություն* Նախագծել սոցիալական որևէ երևույթի ուսումնասիրմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտության ծրագիր:			
Դասընթացիբովանդակությունը	Թեմա 1 Սոցիոլոգիայի ձևավորման նախադրյալները. պատմական ակնարկ:ՈՒսումնասիրության օբյեկտը, առարկան, ֆունկցիաները, կապն այլ գիտությունների հետ: Թեմա 2 Հասարակության կառուցվածքային տարրերը.անհատ, խումբ (տեսակները), կազմակերպություն, ինստիտուտ: Թեմա 3 Հասարակության վերահսկողության մեխանիզմներ. մշակույթ և սոցիալականացում: Թեմա 4 Հասարակության շերտավորում: Թեմա 5 Սոցիոլոգիական հետազոտության մեթոդները:			
Գնահատմանմեթոդները և չափանիշները	Գնահատման մեթոդները. Խմբային աշխատանք, անհատական ներկայացումներ, բանավեճ, հարց ու պատասխան, հարցախույզ: Գնահատման չափանիշները Ուսանողի գիտելիքը - Սոցիոլոգիայի առաջացման պատմական անհրաժեշտության, վերջինիս ուսումնասիրման օբյեկտի, առարկայի, գործառույթների, հիմնականխնդիրների, սոցիոլոգիական գիտելիքի բազմամակարդակ կառուցվածքի վերաբերյալ, - հասարակության պատմական տիպերի, զարգացման օրինաչափությունների, հիմնական ընդհանրությունների եւ տարբերությունների, համակարգային մոտեցման, հասարակության՝իբրեւ համակարգի՝բազմամակարդակ			

	կառուցվածքում գործառնող եւ փոխկախված տարրերի (անհատը՝սոցիալական գործողություն կատարելու տեսանկյունից, խմբեր, կազմակերպություններ, ինստիտուտներ) վերաբերյալ, • հասարակության վերահսկողության մեխանիզմների, դրանց փոխպայմանավորվածության վերաբերյալ, • հասարակության ստրատիֆիկացիոն կառուցվածքի (շերտավորման), այն մեկնաբանող մոտեցումների, հիմնական շերտերի բնութագրի, մոբիլության, վերջինիս տեսակների, ըստ մոբիլության «բաց» եւ «փակ» հասարակությունների մեկնաբանման վերաբերյալ • Սոցիոլոգիական հետազոտության առանձնահատկությունների վերաբերյալ:
Գրականություն	Պարտադիր- 1. Կրավչենկո «Սոցիոլոգիա» Եր.2004 2. Մկրտչյան Ե.Ռ.,Բալայան Ն.Մ.,Սոցիոլոգիա, Երևան 2002 3. Социология, Учебник для студентов вузов, Батурин В.К., 2012 4. Giddens, Anthony, Duneier, Mitchell, Applebaum, Richard. 2007. *Introduction to Sociology. Sixth Edition.* New York: W.W. Norton and Company. Chapter Լրացուցիչ- 1. Социология, Волков Ю.Е., 2012 2. История теоретической социологии, Предыстория социологии, Учебное пособие для вузов, Давыдов Ю.Н., 2010 3. Социология, Курс лекций, Акимова И.А., Багдасарьян Н.Г., 2010 4. Steven Loyal ‘’The Sociology of Anthony Giddens’’, 2003

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՄՀ/բ-123 Զբոսաշրջության սոցիոլոգիա**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	4-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14
			Լաբորատորաշխատանք	
			Գործնականաշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել համընդհանուր պատկերացում նոր գիտական ուղղություններից մեկի՝ Զբոսաշրջության սոցիոլոգիայի, դերի և կարևորության վերաբերյալ, ուսանողների մոտ ձևավորել պատկերացումներ զբոսաշրջության, որպես ամբողջական համակարգի, ինչպես			

	նաև այդ համակարգում մարդու դերի և կարևորության վերաբերյալ:
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* - Զբոսաշրջության սոցիոլոգիայի հիմնական մոտեցումների և հայեցակարգերի, զբոսաշրջության զարգացմանը նպաստող գործոնների ուսումնասիրության մեթոդների, զբոսաշրջության զարգացման ժամանակակից միտումների իմացություն: *Հմտություն* - ժամանակակից աշխարհում զբոսաշրջության ոլորտում տեղի ունեցող երևույթների գնահատում, պատմական փաստերի, զբոսաշրջության տնտեսական և պատմական հիմքերի, նրա որպես սոցիալական ֆենոմենի գործառնության յուրահատկությունների համադրում: *Կարողունակություն* - Զբոսաշրջության ոլորտում հետազոտությունների իրականացում, տվյալների վերլուծություն:
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Ժամանցի սոցիոլոգիան, որպես սոցիոլոգիայի առանձին ճյուղ: Թեմա 2. Զբոսաշրջության սոցիոլոգիան, որպես գիտական դիսցիպլին. առաջացումը և զարգացումը: Թեմա3. Զբոսաշրջությունը որպես սոցիալմշակույթային երևույթ և դրա ինստիտուցիոնալ բնութագրիչները: Թեմա 4. Զբոսաշրջության ոլորտում սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանությունը, ուղղությունը և տեխնոլոգիաները:
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատման մեթոդները Խմբային աշխատանք, անհատական ներկայացումներ, բանավեճ, հարցախույզ: Գնահատման չափանիշները Ուսանողի գիտելիքը՝ - Զբոսաշրջային սոցիոլոգիայի առաջացման պատմական անհրաժեշտության, վերջինիս ուսումնասիրման օբյեկտի, առարկայի, գործառույթների, հիմնական խնդիրների վերաբերյալ, - ժամանցի, որպես ժամանակակից սոցիալական ծառայության բնութագրիչների վերաբերյալ - Զբոսաշրջության ուսումնասիրման սոցիոլոգիական տեխնիկաների, տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ:
Գրականություն	Պարտադիր- 1.Отнюкова, М. С. Социологические исследования в туризме : учебное пособие для вузов / М. С. Отнюкова, Т. В. Черевичко. — Москва : Издательство Юрайт, 2021. — 96 с. 2.Болгов В.И. Социологический анализ новых форм

	социокультурной жиз ни // Социс. 2008. № С. 28-39. 3. Покровский, Н. Е. Туризм: от социальной теории к практике управления : учебное пособие / Н. Е. Покровский, Т. И. Черняева. – 2-е изд., испр. и доп. – Москва : Логос, 2009. – 215 с. 4. The sociology of tourism: Theoretical and empirical investigations Y Apostolopoulos, S Leivadi, A Yiannakis - 2013 5. New directions in the sociology of tourism SA Cohen, E Cohen - Current Issues in Tourism, 2019 - Taylor & Francis Լրացուցիչ- 1. Социология: Основы общей теории: Учеб. пособие / Отв. ред. Г.В. Осипо в, Л.Н. Москвичев. М., 2002. Разд. 6. Гл. 20, « 5. С. 795-799. 2. Туризм: информация, статистика, анализ. // Российский Туристический бюллетень., № 4 (6), 1995. 3. Квартальнов : Учебник для образоват. учреждений турист. профиля / ; Рос. междунар. акад. туризма. - М.: Финансы и статистика, 2002. - 315с. 4. Buzard, J. The Beaten Track. Oxford: Clarendon Press,1993; 5. Crawshaw, C. and Urry, J. 'Tourism and the photographic eye', in C. Rojek and J. Urry (eds) Touring Cultures. London: Routledge, 1997;

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՄԻ/բ-138- ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	28	Դասախոսություն	
			Սեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	28
	Ինքնուրույն	32		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգում			
Դասընթացի նպատակը	Ծանոթացնել ուսանողներին ինֆորմացիա գաղափարի, նրա ներկայացման եղանակների և չափման միավորների, համակարգչի կառուցվածքի, ծրագրային ապահովման հետ: Սովորեցնել աշխատել MS Windows օպերացիոն համակարգի միջավայրում, մուտքագրել և խմբագրել տեքստեր, աշխատել աղյուսակների հետ: Կատարել տվյալների տեսակավորում և զտում MS Excel –ում, կառուցել դիագրամներ, տնտեսագիտական խնդիրները լուծել Solver-ի միջոցով, ստեղծել տվյալների բազաներ:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* □ ինչ է ինֆորմացիան, որոնք են նրա չափման			

	միավորները □ համակարգչի կառուցվածքը, աշխատանքի սկզբունքները □ ինչ է ալգորիթմը, որոնք են նրա տրման եղանակները □ ալգորիթմի տեսակները ըստ կառուցվածքի □ MS Word, MS Excel և MS Access ծրագրերի նշանակությունը □ ինչ է ծրագրավորման լեզուն □ աշխատել VBA մակրոհրամանային միջավայրու *Հմտություն* □ ինֆորմացիայի տեսակավորմանը □ Windows միջավայրում աշխատանքի սկզբունքներին □ MS Office ծրագրային փաթեթին □ Solver-ի հետ աշխատելու սկզբունքներին □ VBA ծրագրավորման միջոցներին: *Կարողունակություն* □ կատարել ինֆորմացիայի տեսակավորում □ կազմել տարբեր խնդիրների լուծման ալգորիթմների բլոկ-սխեմաներ □ աշխատել տեքստային խմբագրի միջավայրում □ մուտքագրել և խմբագրել տեքստեր □ աշխատել աղյուսակների, խորագրերի, հղումների հետ □ կազմել բովանդակություն □ կատարել տվյալների տեսակավորում և ֆիլտրում □ կառուցել դիագրամաներ և գրաֆիկներ □ ստեղծել և աշխատացնել մակրոսներ □ տնտեսագիտական խնդիրները լուծել Excel ծրագրի միջոցով □ ստեղծել տվյալների բազաներ կազմել և աշխատեցնել ծրագրեր VBA մակրոծրագրեր:
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1 Համակարգչային հիմնական և լրացուցիչ սարքավորումները, դրանց դերն ու նշանակությունը/hardware/: □ տեղեկատվական տեխնոլոգիաների գործնական կիրառման հմտություններ տարբեր սարքավորումների համադրում Թեմա 2 Տարբեր ձևաչափի փաստաթղթերի կառուցման հմտություններ. □ էլեկտրոնային փաստաթղթերի ստեղծում, ձևաչափի տեղակայում □ տարբեր էլեկտրոնային ուղեցույցների և հուշագրերի կազմում, ձևավորում □ էլեկտրոնային փաստաթղթում տարբեր օբյեկտների (նկար, սիմվոլ, աղյուսակ) ներկառուցում □ տարբեր ձևաչափի գովազդային նյութերի հմուտ շարված Թեմա 3 Տարբեր օբյեկտներով համալրված հիերարխիկ կառուցվածքով շնորհանդեսային նյութերի կառուցում. □ մասնագիտական ասելիքի տրամաբանված կառուցվածքի ստեղծում □ նյութի ժամանակակից ստանդարտներով էլեկտրոնայի մատուցման հմտություններ □ տրամաբանական անցումների /hiperlink…/ կառուցման հմտություններ □ տուրիզմի տարբեր ծառայությունների տարբեր ձևաչափի էլեկտրոնային հարթակների կառուցում Բոլոր հանձնարավելիք շնորհանդեսային նյութերը վերաբերելու են ՀՀ տարբեր տեսարժան վայրերի ներկայացմանը:

	Թեմա 4 Պարզագույն տվյալների բազայի ավտոմատ ղեկավարման համակարգի ստեղծում □ տվյալների տիպեր □ տվյալների սիստեմավորում և պարզագույն հենքերի կառուցում □ աղյուսակների ստեղծում, ձևերի կառուցում □ պարզագույն հարցումների ստեղծում Բոլոր հանձնարարվելիք տվյալների հենքերի ավտոմատ համակարգերը լինելու են ուսանողների կողմից ստեղծված իրականանման տուրիստական գործակալությունների և ծառայությունների տվյալների բազաների կառուցում այնպես, որ արդյունքում դրանցից ստանանք տարբեր իրատեսական հարցումներ: Թեմա 5 Աղյուսակային պրոցեսորի հետ աշխատելու և ալգորիթմական մտածողության զարգացում □ էլեկտրոնային փաստաթղթի կառուցում □ պարզագույն և միջին բարդության բանաձևերի կազմում և կիրառում □ էլեկտրոնային ինֆորմացիայի դասավորում և ֆիլտրում □ գրաֆիկական վերլուծությունների կառուցում Բոլոր հանձնարարվելիք հաշվարկները վերաբերվելու են երևակայական տուրիստական գործակալությունների և ծառայությունների տարբեր իրականանմա գործընթացների հաշվարկների: Թեմա 6 Համացանցից գրագետ օգտվելու հմտություններ □ էլեկտրոնային հասցե կառուցում □ տարբեր ձևաչափի հարցումներ կազմում
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատման մեթոդներն ու չափանիշները ուղղորդված են կրթության վերջնարդյունքներին. Մասնակցությունը դասընթացին (20 միավոր) □ Գնահատման մեթոդը՝ □ Դասերին հաճախման հաշվառում □ Գնահատման չափանիշները՝ □ Ներկայություն □ Մասնակցություն հարցերի քննարկմանը Մասնակցությունը և ակտիվությունը լաբորատոր աշխատանքներին (20 միավոր) □ Գնահատման մեթոդը՝ □ Ներգրավվածության աստիճանի հաշվում □ Գնահատման չափանիշները՝ □ Ներկայությունը □ Տնային աշխատանքների կատարում □ Մասնակցությունը լսարանային քննարկումներին Ստուգողական աշխատանք (ընդհանուր գնահատականի 20 % կամ 20 միավոր) □ Գնահատման մեթոդը՝ □ Ստուգողական աշխատանքի գնահատում դասախոսի կողմից □ Գնահատման չափանիշները՝ □ Առաջադրված հարցերի պատասխանները □ Առարկայի իմացությունը □ Խնդիրների լուծումը Ինքնուրույն աշխատանք (ընդհանուր գնահատականի 10 % կամ 10 միավոր) □ Գնահատման մեթոդը՝

	□ Անհատական աշխատանքի արդյունքում լուծված խնդիրների պաշտպանություն □ Գնահատման չափանիշները՝ □ Անհատական աշխատանքի ներկայացում □ Խնդիրների լուծման համար կիրառված մեթոդների և միջոցների ընտրության հիմնավորում Բոնուսներ (ընդհանուր գնահատականի 30% կամ 30 միավոր) Գնահատման մեթոդը՝ Վերը նշված 5 տարբեր կետերից առաջացած արդյունքների հանրագումարը Գնահատման չափանիշները՝ Հատուկ համակարգչային ծրագրի միջոցով վերը նշված 5 կետերի արդյունքների հիման վրա տվյալ ուսանողի ունակության, կարողության և հմտության միավորների հաշվում: Ստուգարք Հաշվարկվումէ է վերը նշված կետերից առաջացած արդյունքներից Եզրափակիչ քննություն Գնահատման մեթոդը՝ Գրավոր քննությունների համակցված գնահատում դասախոսի և ուսանողների կողմից Գնահատման չափանիշները՝ Հարցատոմսում առաջադրված հարցերի պատասխանները Առարկայի իմացությունը Հարցատոմսում նշված խնդիրների լուծումը
Գրականություն	Պարտադիր- Ս Կոսեմյան MS EXCEL ԱՂՅՈՒՍԱԿԱՅԻՆ ԽՄԲԱԳԻՐ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ), 2017 Կ. Սիրադեղյան Պատմողականից գրաֆիկական ալգորիթմին անցման կազմակերպոմը որպես մինչծրագրային արդյունավետ փուլ, Բնագետ, Երևան Հովսեփյան Վ. Ս. - "Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի հիմունքներ", Ուսումնական ձեռնարկ, Երևան, Մակարով, Մակարեան Ինֆորմատիկայի հիմունքներ Վենետիկ Карчевский Е.М., Филиппов И.Е. -Excel 2007 в примерах Харитонова И.А. Microsoft Office Access 2007, СПб.: БХВ – Петербург Լրացուցիչ- М. С. Кукушкина-Работа в MS Office 2007, Ульяновск Կ. Սիրադեղյան Ինֆորմատիկայում պայմանավորվածությունների իմաստային շեղումներ մաթեմատիկայից Долженков В.А. Microsoft Office Excel 2007 СПб.: БХВ – Петербург Աշխատանք Solvet գործիքով, ամացանց

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՔԿ/բ-156 Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	14

			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ բույսերի, կենդանիների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների և օրինաչափությունների վերաբերյալ, ուսանողներին ապահովել էկոլոգիական գործոնների, բույսերի,կենդանիների առանձին խմբերի յուրահատուկ վերաբերմունքն արտաքին միջավայրի և որոշ էկոլոգիական օրինաչափությունների, համակեցությունների հարմարվողական դերի մասին, կենսահամակեցությունների կառուցվածքի և թվակազմի կարգավորման մեխանիզմների մասին, ներտեսակային և միջտեսակային փոխհարաբերությունների, սուկցեսիաների և բույսերի կյանքի ձևերի մասին:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* □ Էկոլոգիական գործոնների ազդեցությունը բույսերի վրա և նրանց միջև ստեղծվող փոխհարաբերությունների մասին, □ համակեցությունների կառուցվածքի, նրանցում ընթացող միջտեսակային և ներտեսակային փոխհարաբերությունների մասին: □ համակեցությունների առաջնային և երկրորդային հերթափոխության մասին: *Հմտություն* □ Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ ուսումնասիրման մեթոդներին, □ բնության օրինաչափությունների վերլուծությանը: □ Էկոլոգիա և բնապահպանության հիմունքների բնագավառում գործնական հմտություններին: *Կարողունակություն* □ Յուրացնելով բույսերի էկոլոգիական առանձնահատկությունների մասին գիտելիքները իրականացնել բույսերի,կենդանիների պահպանության միջոցառումներ □ Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ առարկայի վերաբերյալ տեսական գիտելիքներն ու ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ, □ հանձնարարված գրականության հիման վրա կազմել ռեֆերատներ			
Դասընթացի բովանդակությունը	<u>Թեմա1.</u> Դասընթացի ծրագրի ներկայացում և ուսումնական գործողությունների պլանավորում: Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ առարկան« խնդիրները զարգացման տարբեր էտապներում: Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ զարգացման պատմությունը: Ժամանակակից էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ առարկայի կառուցվածքն ու խնդիրները, դիրքը կենսաբանական գիտությունների համակարգում: Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ որպես բնության պահպանության և բնության ռացիոնալ օգտագործման տեսական հիմք:			

	Թեմա2.Բույսերի, կենդանիների վրա արտաքին գործոնների ազդեցության ընդհանուր օրինաչափությունները: Հասկացողություն էկոլոգիական գործոնների մասին: Աբիոտիկ« բիոտիկ« անթրոպոգեն, էդաֆիկ գործոններ: Սահմանափակող գործոններ: Գործոնի ազդեցության ուժ: Օպտիմում և պեսիմում: Կրիտիկական կետեր: Տեսակի էկոլոգիական վալենտականություն: Օրգանիզմների էկոլոգիական դասակարգման սկզբունքները: Թեմա 3.Լույսի դերը բույսերի, կենդանիների կյանքում: Բույսերի,կենդանիների էկոլոգիական խմբերը լույսի նկատմամբ և դրանց ադապտացիոն յուրահատկությունները: Լուսապարբերականություն: Բույսերի,կենդանիների հարմարվողականությունը թույլ լուսավորվածության պայմաններին: Թեմա 4. Ջերմության նկատմամբ բույսերի,կենդանիների էկոլոգիական վալենտականությունը: Ջերմաստիճանի ազդեցությունը օրգանիզմների կենսագործունեության վրա: Բույսերի,կենդանիների ջերմային ռեժիմի յուրահատկությունը:Բույսերի,կենդանիների մոտ ջերմակարգավորման հիմնական ուղիները:Բույսերի,կենդանիների ջերմային ռեժիմը և նրանց ոչնչացման պատճառները ցածր և բարձր ջերմաստիճանի դեպքում: Թեմա 5. Խոնավության նշանակությունը ցամաքային օրգանիզմների կյանքում: Ցամաքի վրա խոնավության ձևերը և աղբյուրները:Բույսերի մոտ խոնավության մուտքի ե ելքի ուղիները: Բույսերի էկոլոգիական խմբերը ըստ ջրային հաշվեկշռի, հիդրոֆիտներ« մեզոֆիտներ և քսերոֆիտներ: Ջրի տարբեր ձևերի ազդեցությունը բույսերի վրա: Թեմա 6.Տեղումների տեսակը և դրանց էկոլոգիական դերը: Բույսերի,կենդանիների կյանքում էդաֆիկ գործոնը: Օդի կազմը և շարժումը: Քամու դերը տեսակների Էկոլոգիայում: Հողը որպես կյանքի միջավայր: Հողի յուրահատկությունը: Հողերի ջրային ռեժիմը: Հողի մեխանիկական կազմի էկոլոգիական նշանակությունը բույսերի,կենդանիների համար: Թեմա 7. Ժամանակը որպես էկոլոգիական գործոն բույսերի,կենդանիների կյանքում: 'Կենսաբանական ժամացույց': Բույսերի,կենդանիների,կենդանիների օրական և ցիրկադային ռիթմը: Բույսերի,կենդանիների էկոլոգիական խմբերն ըստ օրական ակտիվության: Հիմնական ադապտացիաները: Լուսնային ռիթմեր, դրանց յուրահատկությունը: Մակընթացության և տեղատվության ռիթմերը օվկիանոսում: Սեզոնային ռիթմեր: Դրանց ադապտիվ բնույթը: Բույսերի,կենդանիների հարմարվածությունը տարվա անբարենպաստ պայմաններին: Սեզոնային զարգացումը ղեկավարող գործոններ: Բույսերի,կենդանիների մոտ պերիոդիզմի երևույթի էությունը: Թեմա 8. Բիոտիկ կապերի հիմնական տիպերը« դրանց դրսևորման յուրահատկությունը միջտեսակային և ներտեսակային հարաբերություններում: Գրշատիչ-զոհ« մակաբույծ-տեր փոխհարաբերությունները: Այդ կապերի ընդհանուր գծերը և յուրահատկությունը: Թեմա9. Համակեցություն: Հասկացողություն բուսական համակեցության մասին, համակեցության կառուցվածքը: Ստաբիլ և ոչ ստաբիլ համակեցություններ Հասկացողություն

	կենսացենոզի մասին: Ֆիտոցենոզ: Կենսացենոզի կառուցվածքը: Սահմանային Էֆեկտ: Կենսացենոզի տարածական կառուցվածքը: Ջրային և ցամաքային կենսացենոզների տարբերությունը: <u>Թեմա 10.</u> Համակեցության ստաբիլության հիմնախնդիրը: Սուկցեսիաների ընդհանուր օրինաչափությունները: Առաջնային և երկրորդային սուկցեսիաներ: Սուկցեսիաների յուրահատուկ տարբերակները: <u>Թեմա 11.</u> Բույսերի,կենդանիների վրա միջավայրի գործոնների ձևառաջացնող ազդեցությունը: Հասկացողություն բույսերի, կենդանիների կյանքի ձևերի մասին: Կյանքի ձևերի ձևավորման հարմարվողական նշանակությունը: Կյանքի ձևերի դասակարգումը:
Գնահատման մեթոդները և չափանիշները	*<u>6. Գնահատման մեթոդներն ու չափանիշները.</u>* □ 6.1.ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԸՆԹԱՑՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ 1։Մասնակցությունը դասընթացին ։ 20 միավոր։ □ Գնահատման մեթոդը՝ □ Հաճախումների հաշվում □ Գնահատման չափանիշները՝ □ Ներկայությունը 2։Մասնակցությունը և ակտիվությունը գործնական աշխատանքներին ։20 միավոր։ □ Գնահատման մեթոդը՝ □ Ներգրավվածության աստիճանի հաշվում □ Գնահատման չափանիշները՝ □ Ներկայությունը 3։ քննություն 4։ Գործնական և ստուգողական աշխատանք ։ընդհանուր գնահատականի 20 ։ կամ 20 միավոր ։ □ Գնահատման մեթոդը՝ □ Նեգրավվածության աստիճանի հաշվառում □ Գնահատման չափանիշները՝ □ Տնային աշխատանքների կատարում □ Մասնակցությունը լսարանային քննարկումներին □ Մասնակցությունը ստուգողական աշխատանքներին 5։ Ինքնուրույն աշխատանք ։ընդհանուր գնահատականի 10 ։ կամ 10 միավոր ։ □ Գնահատման մեթոդը՝ □ Անհատական և խմբային աշխատանքի արդյունքում պատրաստված նախագծի պաշտպանություն □ Գնահատման չափանիշները՝ □ Անհատական աշխատանքի ներկայացում □ Խմբային աշխատանքի ներկայացում □ Թիմային աշխատանքի մասնակցության աստիճան □ Թիմային աշխատանքի ձևավորված հմտություն 6։Բոնուսներ ։ընդհանուր գնահատականի 30 ։ կամ 30 միավոր ։ □ Գնահատման մեթոդը՝ □ Վերը նշված 6 տարբեր կետերից առաջացած արդյունքների հանրագումարը □ Գնահատման չափանիշները՝ Հատուկ համակարգչային ծրագրի միջոցով վերը նշված 6 կետերի օգնությամբ հաշվվում է տվյալ ուսանողի ունակությունը, կարողությունը և հմտությունը

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Գնահատումը կատարվում է բուհում ընդունված 100 միավորանոց բազմագործոնային գնահատման կանոնակարգի համաձայն.

- մեկ եզրափակիչ քննություն
-երկու ինքնուրույն աշխատանք
-երկու ստուգողական աշխատանք
-մասնակցությունը դասընթացին (մինչև 20 միավոր)
-մասնակցությունը և ակտիվությունը ·ործնական աշխատանքներին (մինչև 20 միավոր)
-եզրափակիչ քննություն
-·ործնական և ստու·ողական աշխատանք (մինչև 20 միավոր)
-ինքնուրույն աշխատանք (մինչև 10 միավոր)
-ուսանողի հմտությունները և կարողությունները (մինչև 30 միավոր)
-դրական համարվում է 8-ից 20 միավորը

Գնահատա□անը ըստ 5 բալանոց համակարգի	Գնահատականը ըստ100 միավորանոց համակարգի	Գնահատականը ըստ կրեդիտային համակարգի
"գերազանց" (5)	96-100	A^+
"գերազանց" (5)	91-95	A
"գերազանց" (5)	86-90	A^-
"լավ" (4)	81-58	B^+
"լավ" □4)	76-80	B
"լավ" (4)	71-75	B^-
"բավարար" (3)	66-70	C^+
"բավարար" (3)	61-65	C
"բավարար" (3)	55-60	C^-
"անբավարար" (2)[1]	40- 54	D
"անբավարար" (2)[2]	մինչև 40	F
"ստուգված"	55-100	S
"չստուգված"[1]	40-54	U
"չստուգված"[2]	մինչև 40	U

Գնահատման սանդղակը

[1])Թույլատրվում է մասնակցել քննության պարտքերի մարմանը

[2])Չի թույլատրվում մասնակցել պարտքերի մարմանը

Գրականություն

Պարտադիր-

1. Двороковский М. С.- Экология растений-1983 г.
2. Горышина Т. К.- Экология растений-1978 г.
3. Березина Н.А., Афанасьева Н.Б.- Экология растений.2009г
4. Մելքումյան- Էկոլոգիա, 2009թ.
5. В.А.Радкевич "Экология" Минск.
6. Н. М. Черпова, А.М.Былова "Экология", М., 1980թ.
7. А.А. Хван "Экология" М., 2002թ.
8. Հարությունյան Լ. Վ.- Ընդհանուր էկոլոգիա,1998թ.

Լրացուցիչ-

	1. Юджин, Одум "Экология". В 2-х томах. 1986 2. Чернова Н.И., Былова А.М.- "Общая экология". 2004 3. Бигон "Экология" М., 1999.

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ԱՍ/բ-051 - Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	4-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	10
			Սեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	14
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել քաղպաշտպանության համակարգին և հիմնական խնդիրներին, ինչպես նաև, արտակարգ իրավիճակներում վարքի կանոններին և բնակչության պաշտպանության հիմնահարցերին:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* *Ուսանողը պետք է իմանա* □ արտադրական իրավիճակների դասակարգումը, բնութագիրը, կանխարգելման միջոցները, ինչպես նաև բնական, էկոլոգիական, տեխնածին աղետներից պաշտպանվելու միջոցառումները: □ զանգվածային ոչնչացման զենքերի տեսակների, դրանց կիրառման ժամանակ առաջացած հետևանքների, պայքարի ու կանխարգելիչ խնդիրները □ բնակչության պաշտպանության միջոցները արտադրական իրավիճակներում և պատերազմի ժամանակ □ ապաստարանների, հակաճառագայթային թաքստոցների կառուցվածքները, տարհանման և ապակենտրոնացման կազմակերպման սկզբունքները □ ռիսկի գործոնը արտակարգ իրավիճակներում, ճգնաժամային կառավարման մի շարք հարցերի գաղափարները: *Հմտություն* □ բնակչության պաշտպանությանը անհատական և կոլեկտիվ միջոցներով □ հակագազից օգտվելու կանոններին □ շնչառական օրգանների պաշտպանության պարզագույն միջոցներին □ մարդասիրական օգնության կազմակերպմանը			

	արտակարգ իրավիճակներում: *Կարողունակություն* □ դիմակայել բնական, էկոլոգիական, տեխնածին աղետներին □ միջուկային, քիմիական, կենսաբանական զենքերից պաշտպանվել ապաստարաններում, հակաճառագայթային թաքստոցներում □ ցուցաբերի առաջին բուժօգնություն տուժածներին □ աշխատել փրկարարական ջոկատներում:
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Արտակարգ իրավիճակներ, առաջացման պատճառները, զարգացման փուլերը և դասակարգումը: Թեմա 2. Տարերային աղետներ, վտանգավոր երևույթներ, առաջացման պատճառները: Տեխնածին աղետներ բնակչության պաշտպանության հրատապ միջոցները: Թեմա 3. Զանգվածային ոչնչացման զենքի տեսակները, բնութագիրը և բնակչության պաշտպանությունը նրանից: Թեմա 4. Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: Թեմա 5. Քաղաքացիական պաշտպանությունը, նրա նպատակները և խնդիրները: Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցները: Թեմա 6. Արտակարգ իրավիճակների ռիսկի գնահատումը: Ռիսկի նվազեցման համալիր ծրագիր: Թեմա 7. Փրկարար աշխատանքի կազմակերպումը ԱԻ և պատերազմի ժամանակ:
Գնահատման մեթոդները և չափանիշները	ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԸՆԹԱՑՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ 1) Ստուգարք 7-րդ կիսամյակում,(դասընթացի վերջում) (20 միավոր) □ Գնահատման մեթոդը՝ □ Գործնական կատարումներ չափորոշիչներին համապատասխան □ Ստուգողական հարցեր □ Գնահատման չափանիշները՝ □ Մշակված նորմատիվների կատարում □ Առարկայի իմացությունը 2· Մասնակցությունը դասընթացին · 10 միավոր· □ Գնահատման մեթոդը՝ □ Հաճախումների հաշվառում □ Գնահատման չափանիշները՝ □ Ներկայությունը 3·Մասնակցությունը և ակտիվությունը գործնական աշխատանքներին ·20 +10 միավոր· □ Գնահատման մեթոդը՝ □ Ներգրավվածության աստիճանի հաշվում □ Գնահատման չափանիշները՝ □ Ներկայությունը ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԸՆԹԱՑՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ 4· Գործնական և ստուգողական աշխատանք ·20 միավոր · □ Գնահատման մեթոդը՝

	□ Նեգրավվածության աստիճանի հաշվառում □ Գնահատման չափանիշները՝ □ Տնային աշխատանքների կատարում □ Մասնակցությունը լսարանային քննարկումներին □ Մասնակցությունը ստուգողական աշխատանքներին 5· Ինքնուրույն աշխատանք ·ընդհանուր գնահատականի 10 · կամ 10 միավոր · □ Գնահատման մեթոդը՝ □ Անհատական և խմբային աշխատանքի արդյունքում պատրաստված նախագծի պաշտպանություն □ Գնահատման չափանիշները՝ □ Անհատական աշխատանքի ներկայացում □ Խմբային աշխատանքի ներկայացում □ Թիմային աշխատանքի մասնակցություն □ Թիմային աշխատանքի ձևավորված հմտություն Հատուկ համակարգչային ծրագրի միջոցով վերը նշված 5 կետերի օգնությամբ հաշվվում է տվյալ ուսանողի ունակությունը, կարողությունը և հմտությունը
Գրականություն	Պարտադիր -Հ.Մ.Գրիգորյան-«Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր», Երևան 2014թ. Ալավերդյան Ռ., Սարաֆյան Կ., «Զրհեղեղներ», Երևան 2000 թ. Ասրյան Հ., Մամիկոնյան Յու., Մաթևոսյան Հ., Սարաֆյան Կ., «Ձեռնարկ ռազմական և արտակարգ իրավիճակներումվարելակերպի կանոնների մասին», Երևան 2001թ. Բալասանյան Ս., «Սեյսմիկ պաշտպանությունը և նրա կազմակերպումը», Գյումրի, Էլդորադո, 200 թ. Մաթևոսյան Հ., Սարաֆյան Կ. և ուրիշներ «Ռազմական և արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների մասին», Ձեռնարկ, Երևան 2001թ. Հովհաննիսյան Ս., «Աղետների ռիսկերի նվազեցման կրթություն», Երևան, Փրինթինֆո 2011թ. Հարությունյան Ս., Արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության հիմունքներ, Երևան, Տնտեսագետ 2003 թ. Լրացուցիչ- Հայաստանի Հանրապետության օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին»1998 թ. 2-ը դեկտեմբերի Հայաստանի Հանրապետության օրենքը «Քաղաքացիական պաշտպանության մասին»,2002 թ. 5-ը մարտի ՀՀ օրենք «Տեղական ինքնակառավարման մասին», Երևան, Նորք-ֆիրմա ՍՊԸ1996 թ ՀՀ օրենքը «Սեյսմիկ պաշտպանության մասին», Երևան 2007թ. ՀՀ օրենքը «ԱԻ-ում բնակչության պաշտպանության մասին»1998 թ. ՀՀ օրենքը «Քաղաքացիական պաշտպանության մասին» 2002 թ.

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ՔԿ/բ-178. Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">2 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">4-րդ տարի, 2-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">24</td><td>Դասախոսություն</td><td>10</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td></td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>14</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">36</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">60</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">ստուգարք</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">«Բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում» առարկայի հիմնական նպատակն է ուսանողների տալ գիտելիքներ բժշկագիտության հիմունքների, հիվանդությունների դասակարգման, առաջացման պատճառների, ընթացքի, կանխարգելման մասին: Նրանց մոտ զարգացնել անհրաժեշտ հմտություններ աղետների օջախում տուժածներին առաջին և մինչբժշկական օգնություն ցույց տալու համար, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի բժշկական օգնություն ցուցաբերելու համար արտակարգ իրավիճակների պայմաններում:Ուսանողների մոտ արմատավորել հմտություններ և կարողություններ կատարելու վիրակապություն, դնել բեկակալ, չափել հիվանդի կամ տուժվածի զարկերակային ճնշումը, որոշել պուլսը, շնչառության հաճախականությունը, չափել մարմնի առավելագույն ջերմությունը, վերահսկել տուժվածի վիճակը,կանխել վնասվածքային շոկի առաջացումը, կազմակերպել ճիշտ օգնություն վնասվածքների ժամանակ, կատարել ճիշտ տեղափոխություն:Գաղափար կազմել առողջ ապրելակերպի, սեռական դաստիարակության մասին:
Ծրագրով նախատեսված են դասախոսություններ և գործնական պարապմունքներ լսարաններում և կաբինետներում, իսկ կլինիկային հատկացված ժամերը անց են կացվում հիվանդանոցում և պոլիկլինիկայում:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.
Գիտելիք
□ Հիվանդությունը (ոչ վարակիչ և վարակիչ):
□ Հիվանդի (վարակիչ և ոչ վարակիչ) հետազոտությունը և ախտորոշումը:
□ Հիվանդի խնամքը՝ սիրտ-անոթային, շնչառության, մարսողության, էնդոկրին, միզազատական և վարակիչ հիվանդությունների ժամանակ:
□ Սիրտ-անոթային օրգանների հիվանդություններ:
□ Սիրտ անոթավորող արյունատար անոթում արյան հոսքի նվազման պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը:
□ Սիրտ անոթավորող արյունատար անոթում արյան հոսքի կանգի պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը:</td></tr>
</table>

	□ Արյան գերճնշման պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: □ Բրոնխների բորբոքումը՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը: □ Բրոնխների ասթման՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: □ Թոքերի բորբոքումը՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: □ Մարսողության օրգանների հիվանդությունները՝ □ Ստամոքսի բորբոքումը՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: □ Խոցային հիվանդություն՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: □ Էնդեմիկ խպիպ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: □ Շաքարախտը՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: □ Երիկամի բորբոքում՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: □ Մեզահեռացնող ուղու բորբոքումը՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը: □ Վարակիչ հիվանդությունների (անվանախմբավորումները, պատճառները): □ Դիզենտերիա՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: □ Լյարդի բորբոքում՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը: □ Ջրծաղիկ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: □ Դիֆտերիա՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: □ Էպիդեմիկ պարոտիտ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: □ Բծավոր տիֆ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: □ Բրուցելյոզ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: □ Սիբիրախտ՝ պատճառը, ախտանշանները, ախտորոշումը, բուժումը, կանխարգելումը: □ Իմունիտետը: Պատվաստումը: □ Անոթազարկի հաճախականություն չափելը: □ Մեխանիկական ճնշումաչափիչով և հնչյունալսիչով արյան ճնշման չափելը: □ Մեխանիկական ճնշումաչափիչով առանց հնչյունալսիչով արյան ճնշման չափելը: □ Շնչառության շարժումների հաճախականություն չափելը: □ Դեղանոթից դեղանյութի զետեղումը ներարկիչի մեջ: □ Դեղանյութի ենթամաշկային ներարկումը: □ Դեղանյութի ներմկանային ներարկումը: □ Դեղանյութի ներանոթային ներարկումը: □ Դեղանյութի ներմուծումը ականջի մեջ: □ Դեղանյութի ներմուծումը քթի խոռոչ: □ Մարմնի ջերմաստիճան չափել: □ Արյան տեղային արյունահոսություն առաջացնող միջոց

	դնել: *Հմտություն* □ Ձեռք բերված տեսական և գործնական գիտելիքների կիրառում: □ անոթազարկի հաճախականություն չափել: □ մեխանիկական ճնշումաչափիչով և հնչյունալսիչով արյան ճնշման չափել: □ շնչառության շարժումների հաճախականություն չափել: □ դեղանոթից դեղանյութ զետեղել ներարկիչի մեջ: □ մարմին ենթամաշկային ներարկել դեղանյութ □ մարմին ներմկանային ներարկել դեղանյութ □ մարմին ներանոթային ներարկել դեղանյութ □ Դեղանյութ ներմուծել ականջի մեջ: □ Դեղանյութ ներմուծել քթի խոռոչ: □ Մարմնի ջերմություն չափել: □ Արյան տեղային արյունահորդություն առաջացնող միջոց դնել *Կարողունակություն* □ Հիվանդի հետազոտության մեթոդներին և առաջին բուժօգնություն ցուցաբերելուն □ անձնական հիգիենայի կանոններին □ հիվանդի խնամքի կազմակերպմանը □ առողջությունը պայմանավորող բաղադրիչների ճիշտ կիրառումը
